Սիրարփի Դավթյան
Եվրասիա միջազգային համալսարանի վարժարանի փոխտնօրեն,
ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

ԺԱՄԱՆԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Հոդվածում քննության են ենթարկվում գրաբարի ժամանականիշ բառերի բառաբարդման կաղապարները՝ հոդակապավոր, անհոդակապ, հնչյունափոխված և անհչյունափոխ: Կան նաև այնպիսի բառեր, որոնք հանդես են գալիս ինչպես հնչյունափոխված, այնպես էլ անհնչյունափոխ արմատներով:

Քննվող բառերը ինչպես երկհիմք, այնպես էլ եռահիմք են: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրաբարում ժամանականիշ բառերի շրջանում տարածված են երկհիմք, հոդակապավոր և անհնչյունափոխ արմատով բարդությունները:

Հիմնաբառեր. ժամանականիշ բառ, կաղապար, բառաբարդում, հնչյունափոխված արմատ, անհնչյունափոխ արմատ, հոդակապավոր բարդություն, անհոդակապ բարդություն, երկհիմք, եռահիմք:

Բառակազմության հարցերի քննությունը հայերենագիտության մեջ սկսվում է դեռևս Դիոնիսոս Թրակացու «Արուեստ քերականութեան» գրքի թարգմանությունից:

Հին հայերենի բառակազմությամբ զբաղվել են Ֆրանցիսկոս Ռիվոլայը, Կղեմես Գալանոսը, Ոսկան Երևանցին, Յոսիպ Շրյոդերը, Մխիթար Սեբաստացին, Բաղդասար Դպիրը, Միքայել Չամչյանը, Գաբրիել Ավետիքյանը, Մանուկ Աբեղյանը, Վարագ Առաքելյանը և այլոք:

Գրաբարի բառակազմության հիմնական եղանակները բառաբարդումն ու ածանցումն են:

Քերականական նախնական աշխատություններում բառաբարդումն ու ածանցումը հստակ չեն տարբերակվել: Բառերը արհեստականորեն էին

հատույթավորվում, իմաստները հաճախ սխալ էին մեկնաբանվում: Այս երևույթը շարունակվում է մինչև լատինատիպ քերականության ձևավորումը:

Բառակազմության հիմնական դրսևորումներն են՝

ա) ածանցումը (նախածանցումը, միջածանցումը, վերջածանցումը, բարդության ածանցումը՝ բարդածանցումը), երբ բառակազմական հիմքերին ավելացնելով մասնիկ (ածանց) կազմում, ենք բառեր կամ նոր բառեր,

բ) բարդացումը կամ բառաբարդումը (հարադրություն, կրկնություն, կցում), երբ պարզ, ածանցավոր բառերի և կամ արմատների համակցումով ստեղծվամ են բառեր կամ նոր բառեր,

գ) հապավումը, երբ սկզբնատառերի՝ սկզբնահնչյունների, բառերի սկգբնամասերի և այլ տարրերի համակցումով բադադրյալ անուններից կազմում են ուրույն (կրճատ) բաղադրություններ,

դ) քերականական ձևերի քարացումը, երբ հին լեզվավիճակների որոշ քերականական ձևեր հետագայում վերածվում են կայուն, անտրոհելի կապակցությունների, բաղադրությունների և գործածվում են իբրև բառի ուղիղ, ինքնուրույն ձևեր (*շնորհիվ, հարկավ, նաև*),

ե) բազմիմաստ բառերի իմաստների հեռացումը, երբ բազմիմաստությունը տրոհվում է, և իմաստներից որևէ մեկի մեկուսացումը, հեռացումը հանգեցնում է նոր, ինքնուրույն, անկախ բառիմաստի հաստատման, նույնանունների գոյացման: (Հ. Պետրոսյան, Հայրենագիտական բառարան, Երևան Հայաստան 1987, էջ 108– 109):

Բառակազմության կենտրոնական հասկացությունը բառն է, ուսումնասիրության հիմնական առարկան՝ բաղադրյալ բառը[1]:

Բառակազմական կաղապարներ ասելով հասկանում ենք բառակազմական տարրերի զուգորդման եղանակները, որոնց օգնությամբ կազմվում են բաղադրյալ/ բարդ և ածանցավոր/ բառերը[2]:

Բաղադրյալ բառի բնույթը որոշվում է ըստ բառակազմական գործընթացի վերջին քայլի: Եթե վերջին քայլն ածանցի կցումն է, կաղապարը մտնում է ածանցավորների մեջ, իսկ եթե վերջին քայլը երկու հիմնական ձևույթների միացումն է/ իրենց ածանցներով հանդերձ/, կաղապարը մտնում է բարդությունների մեջ:

Երկու կամ ավելի հիմնական ձևույթների կամ բառերի կցումով կամ հարադրությամբ կազմված բաղադրությունները, որոնք ունեն մեկ ընդհանուր շեշտ, կոչվում են բարդություններ կամ բարդ բառեր[3]:

Բարդ բառերը կարող են կազմված լինել մի քանի արմատներից: Գրաբարում տարածված են երկարմատ բարդությունները: Այս բարդությունների սերող և բաղադրող հիմքերի որոշումը դժվարություն չի հարուցում.

---

1 Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, էջ 158:

2 Լ. Հովսեփյան,Գրաբարի բառակազմությունը, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1987, էջ 51:

3 Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևանի համալսարանի հրատարակություն, Երևան 1999, էջ 232:

սովորաբար դրանց առաջին բաղադրիչը սերող հիմքն է, երկրորդը՝ բաղադրող[1]:

Ըստ ձևաբանական – շարահյուսական կառույցի՝ բարդությունները լինում են վերլուծական և համադրական:

Մեր քննության առարկան համադրական բարդություններն են:

Համադրական բարդությունները լինում են **կցական** և **իսկական**: Կցական են այն բարդությունները, որի բաղադրիչները հանդես են գալիս միասնաբար՝ **այսօր, կեսօր**:

Իսկական են կոչվում այն բարդությունները, որոնք կազմված են երկու և ավելի ձևույթներից կամ արմատական բառերից, որոնց շարահյուսական կապը մթագնած է կամ ձևաբանորեն չի դրսևորված համապատասխան վերջավորություններով, երբ բաղադրիչները կորցնում են իրենց և ձևական և իմաստային անկախությունը[2]: Օրինակ՝ **երկրատես, Հրակաթ, Փողահար** և այլն:

Մ. Աբեղյանը նշում է իսկական բարդությունների հետևյալ առանձնահատկությունները.

ա) Բարդության երկու մասերի մեջ մտնում է **ա** ձայնավորը, որը կոչվում է հոդակապ, բայց երբ բաղադրիչ մասերից երկրորդը սկսվում է ձայնավորով, հոդակապ չի մտնում:

բ) Բարդության առաջին մասն արտահայտվում է եզակի ուղղական հոլովով:

գ) Բարդության առաջին անդամի վերջին փակ վանկի ձայնավորները, մնալով անշեշտ, կրում են ձայնափոխություն[3]:

Այս խմբի մեջ են մտնում բառի կրկնությամբ կազմված կցական բարդությունները, ինչպես՝

SS–օրեցօր, տարեցտարի, ժամեժամ

SjSj– օրըստօրե, հետզհետե

Նման բարդության բաղադրիչ բառերից մեկը հաճախ հանդես է գալիս թեքված ձևով:

Բառի բաղադրիչներից մեկում կարող է արմատական վերջին բաղաձայնի կորուստ լինել՝

SS– դադար/ դար/:

Բառաբարդման կաղապարները հանդես են գալիս երկու խմբով՝ հոդակապավոր և առանց հոդակապի: Տիրապետող են **SjS**, **<u>S</u>jS** կաղապարները:

Բառաբարդման կաղապարների մեջ են մտնում նաև ածանցավոր բարդությունները:

(Sa)jS– անակ– ժամանակակից

<u>S</u>j(Sa)– անակ– բարեժամանակ

Երկհիմք հոդակապավոր բարդությունների մի տեսակ է նաև նույն ար–

1 Լ. Խաչատրյան, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Երևան 2011, էջ 15:
2 Ա. Սուքիասյան, նույն տեղում, էջ 246:
3 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ջ, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան 1974, էջ 154:

մատի կրկնությամբ ստացվող կաղապարը՝

(SjS)–աղջամուղջ:

Կան բառեր, որոնց երկրորդ բաղադրիչի իմաստը ոչ կանոնավոր հնչյունափոխության հետևանքով դժվարությամբ է գիտակցվում (որպես առաջինի փոփոխված ձև):

(SjS)– աղջամուղջ, աղտամուղտ

Ինչպես գիտենք, բարդ բառերը կազմվում են հոդակապով և առանց հոդակապի: Դրանք քննել ենք առանձին-առանձին՝ առանձնացնելով նաև արմատի հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերը:

Բարդության բաղադրիչները հանդես են գալիս հնչյունափոխված և անհնչյունափոխ արմատներով:

Բարդ բառերը հանդես են գալիս ինչպես հնչյունափոխված, այնպես էլ անհնչյունափոխ արմատներով:

Հնչյունափոխված արմատով ժամանականիշ բարդություններ

Գրաբարում հնչյունափոխության ամենատարածված տիպերն են **ի> 0, ի>ը, ի+ա>ե,** մասամբ՝ **ի>ե:**

Ա ձայնավորով հնչյունափոխության երևույթ կա **շաբաթ** բառով կազմված բառերում՝ **չորեքշաբթի, երեքշաբթի**:

SjS– ամսակէս/*ի>0/*, ամսանահանջ/*ի>0/*, ամսատօն/*ի>0/,* ամսապակաս/*ի>0/,* բարեկենդան/*ի+ա>ե/*, զատկաշաբաթ/*ի>0/,* ծաղկազարդ/*ի>0/*, միջագիշեր/*է>ի/*, ծաղկատօն/*ի>0/*, տարեգլուխ/*ի+ա>ե/*, մշտատիւ/*ի>ը/*, զուգահեռ/*ույ>ու/,* կանխաժամ/*ու>0/,* մշտահար/*ի>ը/*, դռնբաց/*ու>ը/*, ծռազատիկ/*ու>ը/*

SS– երկտիւ, երկշաբաթ/ *ու>0/*

SS– կիրակմուտ /*ի>0/*

SjS– ամսամուտ/*ի>0/,* նախրաթող/*ի>0/,* կիրակամուտ/*ի>0/,* կիրակէմուտ/*ի+ա >0/,* սրբապահ/*ու>ը/*, մշտակայ/*ի>ը/*

SjS– աղջամուղջ/*ա>ու/*

SjS– այգեկիթ, հոգեվար/*ի+ա>ե/*

Բաղադրիչների հնչյունափոխությամբ կազմված կրկնավոր, մասամբ նաև տարարմատ բարդությունները պայմանականորեն անտրոհելի են համարվում՝ **աղջամուղջ, ախտամուխտ** և այլն:

Անհնչյունափոխ արմատով ժամանականիշ բարդություններ

Այս կարգի բարդությունները հիմնականում երկհիմք են:

SjS– արևացայթ, ամատօն, գիշերատիւ, ձայնահաւ, ճաշաժամ, միաշաբաթ, յարատիւ, տօթաժամ, օրագիշեր, աղուհաց, դատարկաժամ, խաւարադիր, միջակայ, յարաժամ, յարամիշտ, վաղաժամ, վաղակարծ, ամանոր, ճաշաժամ, երկեամ

SjS– արևագալ, ձմեռնամուտ, հաւախօս, վարդավառ, շաբաթահան, արագահաս, հետագայ, հետակայ, յարաձիգ, շաբաթամուտ, նաւամուտ

SS– երկուշաբաթ, կարաձմեռն, հինգշաբաթ, հասարակօր, ծառզարդար, այսօր, մինչդեռ, ակնթարթ

S<u>S</u>– օրհաս

Հանդիպում ենք նաև եռահիմք բարդություններ՝

SSjS– վաղվաղափոյթ, մահտարաժամ

Sj(SS)– ժամահամբոյր

(SjS)j<u>S</u>– աղուհացամուտ

Կան բառեր, որոնց արմատները կարող են հանդես գալ և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ ձևով՝ **չորեքշաբաթ–SaS, չորեքշաբթի–Sa<u>S</u>a:**

Հոդակապով ժամանականիշ բարդությունների կաղապարներ

Հոդակապը զուրկ է իմաստից և իմաստային տարբերակում առաջ չի բերում միևնույն բաղադրիչներից կազմված բարդության տարբերակներում՝/ **դռնբաց– դռնաբաց, կիրակմուտ– կիրակամուտ**/ և այդ պատճառով էլ կոչվում է *գործառական ձևույթ*: Գրաբարում որոշ բառերում այն տարբերակիչ դեր է ունեցել՝ **բանավոր– բանվոր:**

Աստվածաշնչում գործածված բառակազմության հիմնական միջոցը ածանցումից հետո **ա** հոդակապով բարդություններն են:

Հոդակապը տրոհելի բառակազմական գործառական մասնիկ է դարձել միայն հայերենի հնագույն շրջանում և որպես այդպիսին սկսել է գիտակցվել հիմնային վերջաձայնավորների թուլացումից և անկումից հետո[1]:

Գրաբարում ունենք ժամանականիշ բարդություններ, որոնց մեջ հոդակապի դերով հանդես են գալիս **ո, ե, ու, ի** ձայնավորները *երկուրաստան, հնգեպրաստան*, որոնք, սակայն, հոդակապ չեն, այլ հնագույն շրջանից պահպանված ձայնավոր բներ, որոնք վկայում են, որ **ա** հոդակապն էլ նախապես եղել է բնի ձայնավոր՝ **աղուհաց**, **աղուհացամուտ, կիրակէմուտ**: Պատմական զարգացման ընթացքում ձայնավորական բներն ընկել են, և հին հայերենում առավել տարածված **ա** բնով բաղադրությունների մեջ այդ **ա**-ն գիտակցվել է որպես բառից անկախ, բաղադրության հիմքերն իրար կապող, միավորող ձայնավոր, այսինքն՝ հոդակապ[2]:

Հոդակապ ունեցող բարդությունները կոչվում **հոդակապավոր բարդություններ:**

Հոդակապի դերում հանդես եկող **ե** ձայնավորը սերող հիմքի վերջնահանգ **ի** ձայնավորի և հոդակապի կամ բաղադրող հիմքի սկզբնահնչյուն **ա** ձայնավորի միավորում է՝ *ի+ա>եա>ե՝* **այգե– կութ, տարե–գլուխ, բարեժամ, հոգե– վար, այգե–կիթք, բարե–կենդան, կիրակէ–մուտ, տարեպատ, հոգե–վարանք, հոգե–վարք**:

Հոդակապավորների մեջ գերակշռում են երկհիմք բարդությունները՝

SjS–աղուհաց, ամատօն, գիշերաժամ, գիշերատիւ, միաշաբաթ, յարատիւ, տարաժամ, օրագիշեր, յարաժամ, վաղակարծ, Շանթակող, Շանթակողմն,

1 Լ. Հովսեփյան, նույն տեղում, էջ 55:
2 Լ. Հովսեփյան, նույն տեղում, էջ 264

Տարափող, Լուսափայլ, Լուսադեմ,ամամէջ:

SjS–արագահաս, աղջամուղջ, ամառնամուտ, ձմեռնամուտ, ճրագալոյց, հաւախօս, ոտնուլուայ, վարդավառ, շաբաթահան, խաւարադիր, Զոպաբեր, Վանատուր, Շանթակալ, Հրակաթ, Կատաղատես, Փողահար, Լուսագայ, Լուսաճեմ:

ճրագալոյց/SjS/ բառի *լոյց* հիմքը համընկնում է պատճառական բայերի անցյալ կատարյալի հիմքին:

Հետակայ, առաջակայ/SjS/ բառերի *կայ* հիմքը համընկնում է ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքին:

Խաչալուայ/SjS/ բառի *լուայ* հիմքը համընկնում է:

SjS–ամսագլուխ, ամսակէս, ամսանահանջ, ամսատօն, զատկաշաբաթ, ծաղկազարդ, կիսաժամ, կրկնազատիկ, միջագիշեր, զուգահետ, կանխաժամ:

Հոդակապով բարդությունների օրինակներում հանդիպում են նաև ածանցներ՝

(SjS)a– տարաժամութիւն, պայծառակերպութիւն

(SjS)a– աղջամղջութիւն, բաղարջակերք, բաղարջակերութիւն, յարաձ–գութիւն, յարատևութիւն,

(**SjS)**a– մշտակայութիւն

SjSa– շաբաթապահք, շաբաթապահութիւն

(Sa)jS– պասեքատօն, ժամանակակէտ

SjSa– սրբապահութիւն

Ssa– բազմօրեայ

(Sja)jSa– քառասնապահութիւն

ajS– ապագա

(SjS)aa– հարատևողութիւն

SjSa– պտղահասութիւն

(ajS)a– նախատօնակ

Sj(Sa)– զուգաժամանակ

Մաքուր հիմքերով երկհիմք հոդակապավոր բարդությունները կազմում են գրաբարի բարդությունների մեծ մասը:

Եռահիմք բարդություններ՝

S(SjS)– մահտարաժամ

(**SjS)jS**– աղուհացամուտ

SSjS– վաղվաղափոյթ

Ինչպես գիտենք, հոդակապի դերում հանդես են գալիս նաև շաղկապ–ներն ու նախդիրները:

SpS– **ի**– ժամիժամ, **ընդ**– ժամընդժամ

S^{f}**pS**– **ի**– ժամէիժամ

SpS^{f} – **ըստ**– միըստմիօջէ, օրըստօրէ

q– հետզհետե

Գրաբարում հոդակապի արժեքով հանդես են եկել նաև **ու, է, ի** ձայնա–վորները՝ **աղուհաց, աղուհացք, կիրակէմուտ, ժամէիժամ**:

Անհոդակապ ժամանականիշ բարդությունների կաղապարներ

Հոդակապից զուրկ բարդությունները կոչվում են անհոդակապ բարդություններ:

Ժամանականիշ բարդությունների հիմանկաղապարների մյուս տիպն անհոդակապ երկարմատ կազմություններն են, որի մեջ ամենագործունը անհնչյունափոխ արմատների միացումն է՝ **այնժամ, չորեքշաբաթ**, **պասեքտոն, երկտիւ, երկշաբաթ,արևմայր, հինօր, միջօր** և այլն:

Երկրորդ բաղադրիչը հոգնակի սեռական հոլովաձև է՝ **SS**^{f}– **հինաւուրց**:

Երկու բաղադրիչների քերականական ձևավորում՝ **S**^{f} **S**^{f} **–յառաջիկայ:**

Այս բարդությունները ևս կարող են ձևավորվել այլևայլ բառակազմական մասնիկներով՝ հիմնականում նախածանցներով և վերջածանցներով, իսկ երբեմն՝ նախածանցի արժեք ստացած նախդիրներով՝ **ի, առ** և այլն:

(aS)S– յայնժամ,յորժամ

S(Sa)– – հինգշաբաթի, երկուշաբթի

Այս խմբում ևս կան նույն արմատի կրկնությամբ կազմություններ՝

<u>SS</u>– վաղվաղ, դադար, աղջաղջ,

S^{f} **S** շաբթէշաբաթ:

Կան նաև անջատ բաղադրիչներով կրկնավորներ՝ *վաղ–վաղ, արագ–արագ, երբեմն–երբեմն, գամու–գամու, անդէն–անդէն, երագ–երագ:*

Հատկանշական է այն, որ բարդությունների առաջին մասն արտահայտվում է հիմնականում *ուղղական* հոլովով:

<u>S</u>^{f}**–<u>S</u>**^{f}–Այս կաղապարով վկայված են ուղղականից տարբեր հոլովաձևեր ունեցող բաղադրիչներով կազմություններ՝

եզակի սեռական– տրական– ամի ամի, ամսոյ ամսոյ, աւուր աւուր, տարւոյ տարւոյ, ժամու ժամու, տարւոյ տարւոյ:

Sa– **Sa**– **անակ**– ժամանակ– ժամանակ

Եք– երբ**եք**–երբ**եք**

Իւ– դար**իւ**– դար**իւ**

Եզակի գործիական՝ **այսուհետև/S**^{f} **S**^{f}/

Բառի բաղադրիչներն առանց հոդակապի են միանում այն ժամանակ, երբ երկրորդ բաղադրիչը սկսվում է ձայնավորով: Կան նաև այնպիսի անհոդակապ բարդություններ, որոնց երկրորդ բաղադրիչը բաղաձայնով է սկսվում՝ **ծառզարդար, մինչդեռ**, **ակնթարթ** և այլն:

Կան այնպիսի բարդություններ, որոնք հանդես են գալիս ինչպես հոդակապով, այնպես էլ առանց հոդակապի՝

SaS– ձրագալոյց–**SS**–ձրագլոյց

Sa<u>S</u>^{f}– կիրակամուտ– **S<u>S</u>**^{f}–կիրակմուտ

SSa– ոտնլուայ –**SjSa** –ոտնալուայ

Հոդակապը դուրս է ընկնում նաև ածանցման ժամանակ՝ **սակաւ/ա/օրեայ**, **պակաս/ա/օրեայ**:

SS– կարաձմեռն, միջօր, հասարակօր, ծառզարդար, այսօր, մինչդեռ, ակնթարթ, երկտիւ, կիրակմուտ, երկշաբաթ, արևմայր, ներկայ, վաղվաղ, հասարակօր

S^{f} S– բազմաւուրբ, կիրակմուտ, ճրագլոյց

SSa– մանրամանակ, մանրերկրորդ, միօրայ, միջօրէ, եռօրեայ, հանապազօրեայ, հասարակօրեայ, հինգշաբաթեան, շաբաթօրեայ, սակաւօրեայ, պակասօրեայ, կարճօրեայ, միօրէ, երկայնօրեայ, վաղվաղուկ, երկայնաւուրս, վաղվաղի, սոյնօրին, միանգամայն

SS^{f} a–վաղանցուկ, վաղանցիկ

S<u>S</u>a– հինգշաբթի, նորամսութիւն, եռամսեայ

<u>S</u>Sa– բազմօրեայ, բազմամեայ, բազմամեան,կիսօրեայ, միջօրէ, հնամեայ

a<u>S</u>S– անդադար

<u>SS</u>a– կրկնակ

SaS– չորեքշաբաթ

SaSa– օրըստօրեայ

aSS– զօրհանապազ, ցայսօր, ցայնժամ

Ա–ն չի դրվում այս, այդ, այն առաջադաս ցուցական դերանուններով բարդություններում: Մեր խմբում **այնժամ** բառն է:

Պետք է նշել, որ կան բառեր, որոնք ձևավորվել են բառաբարդման և ածանցման միաժամանակյա դրսևորմամբ և հնարավոր չէ պարզել բառակազմական քայլերի հաջորդականությունը: Օրինակ՝ **հինգշաբթի, երկուշաբթի**:

Այս խմբում բերված օրինակները ևս երկհիմք են:

Сирарпи Давтян
Заместитель директора колледжа Международного университета Евразия, соискатель кафедры армянского языка и методики его преподавания АГПУ

МОДЕЛИ СЛОЖНЫХ КОНСТРУКЦИЙ ВРЕМЕННЫХ УКАЗАТЕЛЕЙ НА ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

В статье рассматриваются модели сложных конструкций временных указателей древнеармянских слов: с соединительной гласной, без соединительной гласной, с чередующимся корнем, с нечередующимся корнем. Имеются также слова с чередующимися и с нечередующимися корнями. Рассматриваемые слова бывают как двусложные, так и многосложные. Исследование показывает, что в древнеармянском языке были распространены двусложные временные указатели, а также сложные слова с соединительной гласной и без соединительной гласной.

Ключевые слова: древнеармянские слова–временные указатели, модель, словосложение, чередующийся корень, нечередующийся корень, соединительная гласная, без соединительной гласной, двусложное, многосложное.

Sirarpi Davtyan
Deputy head of Eurasia International University College, Ph.D student of the Chair of Armenian Language and its Teaching Methods, ASPU

THE COMPOSITION STRUCTURES OF OLD ARMENIAN WORDS DENOTING TIME

The article touches upon some word compounding patterns on time expression in old Armenian(Grabar) those of being formed by particle or without it, along with being sound interchanged or non–interchanged. There are also some words which are expressed by sound–interchanged roots or non–interchanged roots. The analyzing words are both two–stemmed or three–stemmed. All in all the study shows that in Old Armenian there are widely spread the composition of being formed by particle, two–stemmed and non–interchanged sounds.

Key words: time word, pattern, word composition, sound interchanged root, non sound interchanged root, particle complication, without complication, two–stemmed, three–stemmed.